

Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշակի ծրագրերի և նախագծերի կազմմանը հասարակության մասնակցությունը նախատեսող և «Հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր L 156, 25. 06. 2003թ., էջեր 0017-0025

Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշակի ծրագրերի և նախագծերի կազմմանը հասարակության մասնակցությունը նախատեսող և «Հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը(2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 189(բ) հոդվածով սահմանված ընթացակարգի և Հաշտեցման կոմիտեի կողմից 1998 թվականի հուլիսի 29-ին հաստատված համատեղ տեքստի համաձայն,

Քանի որ

- 1) բնապահպանական ոլորտում գործող Համայնքի օրենսդրությունը նպատակ ունի նպաստելու շրջակա միջավայրի որակի պահպանմանը, պաշտպանությանը և բարելավմանը և մարդու առողջության պահպանմանը,
- 2) Համայնքի՝ շրջակա միջավայրի մասին օրենսդրությունը ներառում է դրույթներ պետական և այլ մարմինների կողմից ընդունվող այն որոշումների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության և բարեկեցության վրա,
- 3) հասարակության արդյունավետ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին հնարավորություն է տալիս հասարակությանը արտահայտելու, իսկ որոշում կայացնողներին՝ հաշվի առնելու կարծիքներ և դիտողություններ, որոնք կարող են կարևոր լինել տվյալ որոշումների համար, դրանով իսկ բարձրացնելով որոշումների ընդունման գործընթացի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և նպաստելով բնապահպանական խնդիրների մասին հանրության իրազեկությանը և ընդունված որոշումների օժանդակությանը,
- 4) մասնակցությունը, այդ թվում՝ ասոցիացիաների, կազմակերպությունների և խմբերի, մասնավորապես, շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող հասարակական կազմակերպությունների մասնակցությունը, պետք է համապատասխանաբար խրախուսվի՝ ներառյալ, մասնավորապես, հասարակության բնապահպանական կրթությունը խթանելու միջոցով,
- 5) 1998 թվականի հունիսի 25-ին Համայնքը ստորագրեց «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիան (Օրհուսի կոնվենցիա), Համայնքի օրենսդրությունը պետք է համապատասխանեցվի այդ Կոնվենցիային՝ Համայնքի կողմից Կոնվենցիայի վավերացման նպատակով,
- 6) Օրհուսի կոնվենցիայի նպատակներից է երաշխավորել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության իրավունքները՝ մարդու առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը նպաստելու նպատակով,

7) Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածը նախատեսում է հասարակության մասնակցությունը կոնվենցիայի 1-ին հավելվածում նշված որոշակի գործունեության, ինչպես նաև հավելվածում չնշված այնպիսի գործունեության առնչությամբ որոշումների ընդունմանը, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա,

8) Օրհուսի կոնվենցիայի 7-րդ հոդվածը նախատեսում է հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող ծրագրերին և նախագծերին,

9) Օրհուսի կոնվենցիայի 9(2) և (4) հոդվածները նախատեսում են դատական կամ այլ վարույթների հնարավորություն՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխան որոշումների, գործողությունների կամ անգործության նյութաիրավական կամ ընթացակարգային օրինականությունը վիճարկելու նպատակով,

10) պետք է սահմանվի դրույթ բնապահպանական ոլորտի որոշ այն հրահանգների վերաբերյալ, որոնց համաձայն՝ անդամ պետություններից պահանջվում է մշակել շրջակա միջավայրին վերաբերող ծրագրեր և նախագծեր, բայց որոնք չեն պարունակում անհրաժեշտ դրույթներ հասարակության մասնակցության մասին՝ Օրհուսի կոնվենցիայի և, մասնավորապես, դրա 7-րդ հոդվածի դրույթների համաձայն մասնակցությունն ապահովելու նպատակով: Համայնքի մեկ այլ համապատասխան օրենսդրությունն արդեն ապահովում է հասարակության մասնակցությունը ծրագրերի և նախագծերի պատրաստմանը, և հետագայի համար Օրհուսի կոնվենցիայի համաձայն հասարակության մասնակցության պահանջները կներմուծվեն համապատասխան օրենսդրության մեջ,

11) Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի «Որոշակի պետական կամ մասնավոր ծրագրերի ազդեցությունը շրջապատի վրա գնահատման մասին» 85/337/ԵՏՀ և Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի «Աղտոտվածության կանխման և վերահսկման մասին» 96/61/ԵՀ հրահանգները պետք է փոփոխվեն՝ Օրհուսի կոնվենցիային, մասնավորապես 6-րդ և 9(2) և (4) հոդվածներին, դրանց ամբողջական համապատասխանությունն ապահովելու նպատակով,

12) քանի որ առաջարկվող գործողության նպատակը, այն է՝ Օրհուսի կոնվենցիայի պարտավորությունների կատարումը, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, և, հետևաբար, առաջարկվող գործողության ծավալից և ազդեցությունից ելնելով՝ կարող է առավել արդյունավետ իրագործվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ համաձայն Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի: Այդ հոդվածով սահմանված

համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգի նպատակը Օրհուսի կոնվենցիայից բխող պարտավորությունների իրականացմանը նպաստելն է, մասնավորապես՝

ա) նախատեսելով հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշակի ծրագրերի և նախագծերի կազմմանը.

բ) բարելավելով հասարակության մասնակցությունը և Խորհրդի 85/337/ԵՏՀ և 96/61/ԵՀ հրահանգներում արդարադատության մատչելիության մասին դրույթներ նախատեսելով:

Հոդված 2

Հասարակության մասնակցությունը՝ կապված ծրագրերի և նախագծերի հետ

1. Սույն հոդվածի նպատակներով՝ «հասարակություն» նշանակում է մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց ասոցիացիաները, կազմակերպությունները կամ խմբերը:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հասարակությանը տրվեն 1-ին հավելվածի համաձայն կազմվելիք ծրագրերի և նախագծերի պատրաստմանը և փոփոխմանը կամ վերանայմանը վաղ փուլում մասնակցության արդյունավետ հնարավորություններ:

Այդ նպատակով՝ անդամ պետություններն ապահովում են՝

ա) հասարակության իրազեկումը նման ծրագրերի և նախագծերի, դրանց փոփոխման կամ վերանայման վերաբերյալ առաջարկների մասին հրապարակային ծանուցումներով կամ

այլ համապատասխան միջոցներով, ինչպիսիք են, առկայության դեպքում, էլեկտրոնային լրատվամիջոցները, և նման առաջարկների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության մատչելիությունը հասարակությանը՝ ներառյալ տեղեկատվություն, մասնավորապես, որոշումների ընդունմանը մասնակցելու և այն իրավասու մարմնի վերաբերյալ, որին կարող են ներկայացվել դիտողություններն ու հարցերը.

բ) հասարակության՝ դիտողություններ և կարծիքներ հայտնելու իրավունքը, երբ առկա են բոլոր տարբերակները ծրագրերի և նախագծերի վերաբերյալ որոշումներն ընդունելուց առաջ.

գ) այն, որ այդ որոշումներն ընդունելիս համապատասխան կերպով հաշվի են առնվում հասարակության մասնակցության արդյունքները.

դ) այն, որ ուսումնասիրելով հասարակության արտահայտած դիտողությունները և կարծիքները՝ իրավասու մարմինը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ տեղեկացնելու հասարակությանը ընդունված որոշումների և այդ որոշումների հիմքում ընկած պատճառների և նկատառումների մասին, այդ թվում՝ տեղեկատվություն հասարակության մասնակցության գործընթացի վերաբերյալ:

3. Անդամ պետությունները նշում են, թե ովքեր ունեն 2-րդ պարբերության նպատակներով մասնակցության իրավունք, ներառյալ՝ ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող համապատասխան հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող կազմակերպությունները:

Հասարակության՝ սույն հոդվածով նախատեսված մասնակցության մանրամասն միջոցառումները սահմանվում են անդամ պետությունների կողմից՝ հասարակությանը արդյունավետ կերպով պատրաստվելու և մասնակցելու հնարավորություն տալու նպատակով:

Սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ տրամադրելով բավարար ժամանակ սույն հոդվածով պահանջվող՝ հասարակության մասնակցության տարբեր փուլերից յուրաքանչյուրի համար:

4. Սույն հոդվածը չի կիրառվում այն ծրագրերի և նախագծերի նկատմամբ, որոնք նախատեսված են միայն ազգային անվտանգության նպատակներին ծառայելու կամ քաղաքացիական արտակարգ իրավիճակների դեպքում իրականացվելու համար:

բ) շահագրգիռ հասարակությանը տրամադրել (ա) կետում նշված գնահատման այլ ձևերով ձեռք բերված տեղեկատվությունը, հրահանգի դրույթները չկիրառելու մասին որոշումների և նման որոշում ընդունելու պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը:».

4. 6-րդ հոդվածում 2-րդ և 3-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հասարակությունը հրապարակային ծանուցումներով կամ համապատասխան այլ միջոցներով, ինչպիսիք են, առկայության դեպքում, էլեկտրոնային լրատվամիջոցները, 2(2) հոդվածում նշված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման ընթացակարգի վաղ փուլում, իսկ ամենաուշը՝ տեղեկատվությունը համապատասխան կերպով փոխանցելու հնարավորության դեպքում, տեղեկացվում է հետևյալի մասին՝

ա) կառուցապատման համաձայնության վերաբերյալ հարցման մասին.

բ) ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման ընթացակարգի ենթակա լինելու և, անհրաժեշտության դեպքում, 7-րդ հոդվածի կիրառման մասին.

գ) մանրամասներ որոշումն ընդունելու համար պատասխանատու իրավասու մարմինների մասին, այն մարմինների մասին, որոնցից կարելի է ձեռք բերել համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև այն մարմինների մասին, որոնց կարելի է ներկայացնել դիտողություններ կամ հարցեր, և դիտողություններն ու հարցերը փոխանցելու ժամկետների մանրամասներ.

դ) հնարավոր որոշումների բնույթի կամ, առկա որոշման դեպքում, որոշման նախագծի մասին.

ե) հիշատակում 5-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված տեղեկատվության մատչելիության մասին.

զ) հիշատակում ժամկետների կամ այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկատվությունը կտրամադրվի.

է) հասարակության մասնակցության՝ 5-րդ կետի համաձայն արված կարգավորումների մանրամասներ:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը ողջամիտ ժամկետներում տրամադրվի հասարակությանը՝

ա) 5-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված ցանկացած տեղեկատվություն.

բ) համաձայն ազգային օրենսդրության՝ հիմնական զեկույցները և խորհուրդները, որոնք ներկայացվել են իրավասու մարմինն կամ մարմիններին այն ժամանակահատվածում, երբ հասարակությունը տեղեկացվում է սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն.

գ) համաձայն «Որոշակի ծրագրերի և նախագծերի հարցումների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգի դրույթների՝ սույն հոդվածի 2-րդ պարբերությունում չնշված տեղեկատվություն, որը կարող է տրամադրվել հասարակությանը սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն տեղեկացնելուց հետո:

4. Շահագրգիռ հասարակությանը տրվում են 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին վաղ փուլում մասնակցելու արդյունավետ հնարավորություններ, դիտողություններ և կարծիք հայտնելու իրավունք, երբ իրավասու մարմինը կամ մարմինների համար բաց են բոլոր տարբերակները կառուցապատման համաձայնության վերաբերյալ հարցմանն առնչվող որոշումն ընդունելուց առաջ:

5. Հասարակությանը տեղեկացնելու (օրինակ, որոշակի շառավղով պաստառներ փակցնելու կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և հանրության հետ խորհրդակցելու մանրամասն կարգավորումները (օրինակ, գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) սահմանվում են անդամ պետությունների կողմից:

6. Սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ տրամադրելով բավարար ժամանակ հասարակության տեղեկացման և շահագրգիռ հասարակության կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին նախապատրաստման և արդյունավետ մասնակցության համար:».

5. 7-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին և 2-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Եթե անդամ պետությանը հայտնի է, որ ծրագիրը կարող է էական ազդեցություն ունենալ մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե որևէ անդամ պետություն, որը կարող է էական ազդեցություններ կրել, նման պահանջ է ներկայացնում, այն անդամ պետությունը, որի տարածքում պետք է իրականացվի ծրագիրը, ազդեցություն կրող անդամ պետությանը հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան հանրությանը տեղեկացնելուց հետո, ուղարկում է, մասնավորապես՝

ա) ծրագրի նկարագրությունը՝ ընդգրկելով առկա տեղեկատվություն հնարավոր անդրսահմանային ազդեցության մասին.

բ) այն որոշման բնույթի մասին, որը կարող է ընդունվել,

և այլ անդամ պետությունների համար սահմանում է ողջամիտ ժամկետ՝ տեղեկացնելու համար, որ իրենք ուզում են մասնակցել 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին և կարող է ներկայացնել սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված տեղեկատվությունը:

2. Եթե որևէ անդամ պետություն, որը ստանում է 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկատվություն, հայտնում է, որ մտադիր է մասնակցել շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին, այն անդամ պետությունը, որի տարածքում ծրագիրը պետք է իրականացվի, ազդեցություն կրող անդամ պետությանն է ուղարկում, եթե նախապես դա չի արել, տեղեկատվություն, որը պահանջվում է տրամադրվել 6(2) հոդվածի և մատչելի դարձնել 6(3)(ա) և (բ) հոդվածների համաձայն:».

բ) 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կարգավորումները կարող են սահմանվել համապատասխան անդամ պետությունների կողմից և պետք է լինեն այնպիսին, որ ազդեցություն կրող անդամ պետության շահագրգիռ հասարակությանը հնարավորություն տրվի մասնակցելու 2(2) հոդվածում նշված շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման ընթացակարգին:».

6. 9-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Երբ ընդունվում է կառուցապատման համաձայնություն տալու կամ մերժելու որոշում, իրավասու մարմինը կամ մարմինները, համապատասխան ընթացակարգերի համաձայն, այդ մասին տեղեկացնում են հասարակությանը և տվյալ հասարակությանը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝

– որոշման բովանդակությունը և դրան կից բոլոր պայմանները.

– ուսումնասիրելով շահագրգիռ հանրության դիտողություններն ու կարծիքները՝ որոշման ընդունման հիմքում ընկած հիմնական պատճառներն ու նկատառումները՝ ներառյալ տեղեկատվություն հասարակության մասնակցության գործընթացի վերաբերյալ.

– Բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու և, հնարավորության դեպքում, չեզոքացնելու միջոցառումների նկարագրություն.».

(բ) 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Իրավասու մարմինը կամ մարմինները տեղեկացնում են ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցություն է անցկացվել 7-րդ հոդվածի համաձայն, տվյալ անդամ պետությանը ուղարկելով սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տեղեկատվությունը:

Այն անդամ պետությունը, որի հետ խորհրդակցություն է անցկացվել, ապահովում է, որ տեղեկատվությունը համապատասխան կերպով հասանելի դարձվի շահագրգիռ հասարակությունը:».

7. ավելացնել հետևյալ բովանդակությամբ հոդված՝

«Հոդված 10ա

Անդամ պետություններն ապահովում են, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, շահագրգիռ հասարակության անդամները՝

ա) որոնք բավականաչափ շահագրգռված են, կամ

բ) որոնց իրավունքը շարունակում է խախտված մնալ, եթե դա պահանջվում է անդամ պետության վարչական դատավարության իրավունքով որպես նախապայման.

կարող են օգտվել վերանայման ընթացակարգից դատարանում կամ օրենքի համաձայն ստեղծված մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնում՝ որոշումների, գործողությունների կամ նյութական կամ ընթացակարգային օրինականությունը վիճարկելու նպատակով՝ պահպանելով հասարակության մասնակցության մասին սույն Հրահանգի դրույթները:

Անդամ պետությունները սահմանում են, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողություններն ու անգործությունը:

Թե ինչ են իրենցից ներկայացնում բավարար շահագրգռվածությունը և իրավունքի չեղյալ հայտարարումը, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ համաձայն հասարակության համար արդարադատության մատչելիությունն ապահովելու նպատակի: Այս նպատակով՝ 1(2) հոդվածի պահանջները բավարարող հասարակական կազմակերպության շահագրգռվածությունը համարվում է բավարար սույն հոդվածի (ա) պարբերության նպատակների համար: Նման կազմակերպություններն համարվում են

այնպիսի իրավունքներ ունեցողներ, որոնք կարող են խախտվել սույն հոդվածի (բ) ենթապարբերության իմաստով:

Սույն հոդվածի դրույթները չեն բացառում նախնական վերանայման ընթացակարգի հնարավորությունը վարչական որևէ մարմնում և չեն ազդում դատական վերանայման ընթացակարգից առաջ վարչական վերանայման ընթացակարգի դադարման պահանջի վրա, եթե նման պահանջ կա ազգային օրենսդրության համաձայն:

Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արդար, անաչառ, առանց ձգձգումների և չընդգրկի չափազանց մեծ ծախսեր:

Սույն հոդվածի դրույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ անդամ պետությունն ապահովում է, որ գործնական տեղեկատվություն հասարակությանը տրամադրվի գործնական տեղեկատվություն՝ հնարավոր դարձնելով վարչական և դատական վերանայման ընթացակարգերը:».

8. I հավելվածը լրացնել հետևյալ կետով.

«22. Սույն հավելվածում թվարկված ծրագրերի ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում, եթե նման փոփոխությունը կամ ընդլայնումը որոշակի սահմաններում է՝ այդպիսի սահմանների առկայության դեպքում, նշվում է հավելվածում:».

9. II հավելվածում, թիվ 13-ի առաջին պարբերություն ավելացվում է վերջում.

«(I հավելվածում չընդգրկված փոփոխություն կամ ընդլայնում):»:

Հոդված 4

Փոփոխություն 96/61/ԵՀ հրահանգում

96/61/ԵՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 2-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 10բ կետում ավելացնել հետևյալ նախադասությունը՝

«Սույն սահմանման նպատակներով՝ գործունեության ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում համարվում է նյութական, եթե փոփոխությունը կամ ընդլայնումը որոշակի սահմաններում է՝ նման սահմանների առկայության դեպքում».

բ) ավելացնել հետևյալ կետերը՝

«13. «հասարակություն» նշանակում է մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց ասոցիացիաները, կազմակերպությունները և խմբերը.

14. «շահագրգիռ հասարակություն» նշանակում է հասարակություն, որի վրա ազդել է կամ կարող է ազդել թույլտվություն տալու կամ վերանայելու կամ թույլտվության պայմաններ սահմանելու կամ վերանայելու մասին որոշումների ընդունումը, կամ որը հետաքրքրված է դրանով. սույն սահմանման նպատակներով՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության պահանջները բավարարող կազմակերպությունները համարվում են շահագրգիռ.».».

2. 6(1) հոդվածի 1-ին ենթապարբերությունը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«– առկայության դեպքում՝ հիմնական այլընտրանքային տարբերակներ, որոնք մանրամասնորեն ուսումնասիրվել են հայտատուի կողմից:».

3. 15-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությանը տրվեն արդյունավետ հնարավորություններ՝ վաղ փուլում մասնակցելու հետևյալ ընթացակարգերին՝

– նոր կառուցվածքների թույլտվության տրամադրում.

– կառուցվածքի շահագործման էական փոփոխության թույլտվության տրամադրում.

– կառուցվածքի թույլտվության կամ թույլտվության պայմանների վերանայում՝ համաձայն 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության առաջին պարբերությի:

V հավելվածում նշված ընթացակարգը կիրառվում է նման մասնակցության նպատակներով:».

բ) ավելացնել հետևյալ պարբերությունը՝

«5. Երբ ընդունվում է զարգացման համաձայնություն տալու կամ մերժելու մասին որոշում, իրավասու մարմինը կամ մարմինները, համապատասխան ընթացակարգերի համաձայն, այդ մասին տեղեկացնում են հասարակությանը և տվյալ հասարակությանը տրամադրում են հետևյալ տեղեկատվությունը՝

ա) որոշման բովանդակությունը՝ ներառյալ թույլտվության և թույլտվության պայմանների պատճենը և հետագա վերանայումները, և

բ) ուսումնասիրելով շահագրգիռ հասարակության դիտողություններն ու կարծիքները՝ որոշման ընդունման հիմքում ընկած հիմնական պատճառներն ու նկատառումները՝ ներառյալ տեղեկատվություն հասարակության մասնակցության գործընթացի վերաբերյալ:».

4. 3. ավելացնել հետևյալ բովանդակությամբ հոդված՝

«Հոդված 15ա

Արդարադատության մատչելիություն

Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակության անդամները, համապատասխան ներպետական իրավական համակարգի համաձայն,

ա) լինելով բավականաչափ հետաքրքրված, կամ

բ) պահպանելով իրավունքը չեղյալ հայտարարելու հնարավորությունը, երբ դա պահանջվում է անդամ պետության ընթացակարգային իրավունքով որպես նախապայման,

կարող են օգտվել վերանայման ընթացակարգից դատարանում կամ օրենքի համաձայն ստեղծված մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնում՝ որոշումների, գործողությունների կամ անգործության նյութական կամ ընթացակարգային օրինականությունը վիճարկելու նպատակով՝ պահպանելով հասարակության մասնակցության մասին սույն Հրահանգի դրույթները:

Անդամ պետությունները սահմանում են, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողություններն ու անգործությունը:

Թե ինչ են իրենցից ներկայացնում բավարար շահագրգռվածությունը և իրավունքը չեղյալ հայտարարելը, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ համաձայն հասարակության համար արդարադատության մատչելիությունն ապահովելու նպատակի:

Այս նպատակով՝ 2(14) հոդվածի պահանջները բավարարող հասարակական կազմակերպության շահագրգռվածությունը համարվում է բավարար՝ սույն հոդվածի (ա) պարբերության նպատակով: Նման կազմակերպություններն ունեն նաև խախտման ենթակա իրավունքներ՝ սույն հոդվածի (բ) ենթապարբերության նպատակով:

4. Իրավասու մարմինը տեղեկացնում է ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցել են 1-ին պարբերության համաձայն, դիմումի վերաբերյալ ընդունած որոշման մասին և այդ անդամ պետությանն է ուղարկում 15(5) հոդվածում նշված

տեղեկատվությունը: Այդ անդամ պետությունն ապահովում է, որ տեղեկատվությունը համապատասխան կերպով հասանելի դարձվի պետության տարածքում գտնվող շահագրգիռ հասարակությունը:».

6. ավելացվում է նոր V հավելված՝ սույն Հրահանգի II հավելվածին համապատասխան:

Հոդված 5

Հաշվետվություն և վերանայում

Մինչև 2009 թվականի հունիսի 25-ը Հանձնաժողովը սույն Հրահանգի կիրառման և արդյունավետության մասին հաշվետվություն է ուղարկում Եվրոպական պառլամենտին և Խորհրդին: Նպատակ ունենալով շարունակել ներմուծել շրջակա միջավայրի պաշտպանության պահանջներ, համաձայն Պայմանագրի 6-րդ հոդվածի, և հաշվի առնելով անդամ պետություններում սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձը՝ նման հաշվետվությանը, անհրաժեշտության դեպքում, կցվում են սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու առաջարկներ: Հանձնաժողովը, մասնավորապես, քննարկում է սույն Հրահանգի գործողության շրջանակն ընդլայնելու հնարավորությունը՝ ընդգրկելու համար շրջակա միջավայրին վերաբերող այլ ծրագրեր և նախագծեր:

Հոդված 6

Կիրարկումը

Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն ոչ ուշ, քան մինչև 2005 թվականի հունիսի 25-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց

պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 7

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակման օրվանից:

Հոդված 8

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի մարտի 26-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահը

Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

Նախագահը

Գ. Դրիս

1) ՊՏ թիվ C 154 E, 29.05.2001թ., էջ 123:

2) ՊՏ թիվ C 221, 07.08.2001թ., էջ 65:

3) ՊՏ թիվ C 357, 03.09.2001թ., էջ 58:

4) Եվրոպական պառլամենտի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 112, 09.05.2002թ., էջ 125(E)), Խորհրդի 2002 թվականի ապրիլի 25-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 170 E, 16.07.2002թ., էջ 22) և Եվրոպական պառլամենտի 2002 թվականի սեպտեմբերի 5-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի

հրապարակվել): Եվրոպական պառլամենտի՝ 2003 թվականի հունվարի 30-ի որոշում և
Խորհրդի՝ 2003 թվականի մարտի 4-ի որոշում:

5) ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40: 97/11/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 73,
14.03.1997թ., էջ 5):

6) ՊՏ թիվ L 257, 10.10.1996թ., էջ 26:

7) ՊՏ թիվ L 197, 21.07.2001թ., էջ 30:

8) ՊՏ թիվ L 327, 22.12.2000թ., էջ 1: 2455/2001/ԵՀ հրահանգով (ՊՏ թիվ L 331, 15.12.1998թ., էջ
1) փոփոխված և լրացված հրահանգ:

9) ՊՏ թիվ L 41, 14.02.2003թ., էջ 26:

ՀԱՎԵԼՎԱԾ I

2-ԴՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ և ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

ա) Խորհրդի «Թափոնների մասին» 1975 թվականի հուլիսի 15-ի 75/442/ԵՏՀ հրահանգի 7(1) հոդված.

բ) Խորհրդի 1991 թվականի մարտի 18-ի «Որոշակի վտանգավոր նյութեր պարունակող մարտկոցների մասին» 91/157/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդված.

գ) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյուղատնտեսական աղբյուրների նիտրատների հետևանքով ջրերի աղտոտումը կանխելու մասին» 91/676/ԵՏՀ հրահանգի 5(1) հոդված.

դ) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի «Վտանգավոր թափոնների մասին» 91/689/ԵՏՀ հրահանգի 6(1) հոդված.

ե) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի «Փաթեթավորման և փաթեթավորման թափոնների մասին» 94/62/ԵՀ հրահանգի 14-րդ հոդված.

զ) Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդի որակի գնահատման և վերահսկման մասին» 96/62/ԵՀ հրահանգի 8(3) հոդված.

1) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 39: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 96/350/ԵՀ որոշումով (ՊՏ L 135, 06.06.1996, էջ 32) փոփոխված հրահանգ:

2) ՊՏ L 78, 26.03.1991թ., էջ 38: Վերջին անգամ Հանձնաժողովի 98/101/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 1, 05.01.1999 թ., էջ 1):

3) ՊՏ թիվ L 375, 31.12.1991թ., էջ 1:

4) ՊՏ թիվ L 377, 31.12.1991թ., էջ 20: Վերջին անգամ 94/31/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 168, 02.07.1994թ., էջ 28):

5) ՊՏ թիվ L 365, 31.12.1994թ., էջ 10:

6) ՊՏ թիվ L 296, 21.11.1996թ., էջ 55:

ՀԱՎԵԼՎԱԾ II

96/61/ԵՀ հրահանգում ավելացնել հետևյալ հավելվածը՝

«ՀԱՎԵԼՎԱԾ V

Հասարակության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին

1. Հասարակությունը հրապարակային ծանուցումներով կամ համապատասխան այլ միջոցներով, ինչպիսիք են, առկայության դեպքում, էլեկտրոնային լրատվամիջոցները, տեղեկացվում է հետևյալի մասին՝ 2(2) հոդվածում նշված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման ընթացակարգի վաղ փուլում, իսկ ամենաուշը՝ տեղեկատվությունը համապատասխան կերպով փոխանցելու հնարավորության դեպքում՝

ա) թույլտվության դիմում կամ, անհրաժեշտության դեպքում, համաձայն 15(1) հոդվածի՝ թույլտվությունը կամ թույլտվության պայմանները վերանայելու առաջարկ՝ ներառյալ 6(1) հոդվածում նշված տարրերի նկարագրությունն.

բ) անհրաժեշտության դեպքում, տեղեկություն, որ որոշումը ենթակա է ազգային կամ անդրսահմանային ազդեցության գնահատման կամ 17-րդ հոդվածի համաձայն անդամ պետությունների միջև խորհրդակցությունների.

գ) մանրամասներ որոշման ընդունման համար պատասխանատու մարմինների մասին, այն մարմինների մասին, որոնցից կարելի է ստանալ համապատասխան տեղեկատվություն, որոնց կարելի է ներկայացնել դիտողություններ և հարցեր, և դիտողություններն ու հարցերը փոխանցելու ժամկետների մանրամասներ.

դ) հնարավոր որոշումների բնույթի կամ, առկա որոշման դեպքում, որոշման նախագծի մասին.

ե) անհրաժեշտության դեպքում, մանրամասներ թույլտվությունը կամ թույլտվության պայմանները վերանայելու առաջարկի վերաբերյալ.

զ) հիշատակում ժամկետների կամ այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկատվությունը կտրամադրվի.

է) հասարակության մասնակցության կամ խորհրդակցության՝ 5-րդ կետի համաձայն արված կարգավորումների մանրամասներ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը համապատասխան ժամկետներում տրամադրվի հասարակությանը՝

ա) համաձայն ազգային օրենսդրության՝ հիմնական զեկույցները և խորհուրդները, որոնք ներկայացվել են իրավասու մարմին կամ մարմինների այն ժամանակահատվածում, երբ հասարակությունը տեղեկացվում է սույն 1-ին կետի համաձայն.

բ) համաձայն «Հանրության համար շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգի դրույթների՝ սույն հոդվածի 1-ին պարբերությունում չնշված տեղեկատվություն, որը կարևորություն ունի որոշման համար՝ 8-րդ հոդվածի համաձայն, և որը մատչելի է դառնում 1-ին կետի համաձայն հասարակությանը տեղեկացնելուց հետո:

3. Շահագրգիռ հասարակությունն իրավունք ունի իրավասու մարմին ներկայացնելու դիտողություններ և կարծիքներ որոշումն ընդունելուց առաջ:

4. Սույն հավելվածի համաձայն իրականացված խորհրդակցությունների արդյունքները պետք է համապատասխան կերպով հաշվի առնվեն որոշման ընդունման ժամանակ:

5. Հասարակությանը տեղեկացնելու (օրինակ, որոշակի շառավղով պաստառների փակցնելու կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և հասարակության հետ խորհրդակցելու մանրամասն կարգավորումները (օրինակ, գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) սահմանվում են անդամ պետությունների կողմից: Սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ տրամադրելով բավարար ժամանակ հասարակության տեղեկացման և շահագրգիռ հասարակության կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին նախապատրաստման և արդյունավետ մասնակցության համար:

1) ՊՏ թիվ L 41, 14.02.2003թ., էջ 26:

Հանձնաժողովի հայտարարությունը

Հղում կատարելով Հանձնաժողովի 2003 թվականի աշխատանքային ծրագրին՝ Հանձնաժողովը հաստատում է 2003 թվականի առաջին եռամսյակի համար նախատեսված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը վերաբերող հրահանգի համար առաջարկ ներկայացնելու մտադրությունը: